

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» փետրվարի 2015 թ.

N--- - Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով Երևանի քաղաքապետի եզրակացությունը, հիմք ընդունելով ստեղծագործական միությունների և միավորումների համատեղ ստորագրությամբ գրությունը, ղեկավարվելով «Գույքահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի հունիսի 22-ի թիվ 822-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. «Հայաստանի գրողների միություն» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 00015135/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 3 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 6758.5 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 4691.3 հազար դրամ, տույժ՝ 2067.2 հազար դրամ/:

2. «Հայաստանի նկարիչների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02511023/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Աբովյան 16 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 7398.2 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 5083.2 հազար դրամ, տույժ՝ 2315.0 հազար դրամ/:

3. «Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02505418/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 13 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 4036.4 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 2768.0 հազար դրամ, տույժ՝ 1268.4 հազար դրամ/:

4. «Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02509992/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի 3 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 1787.7 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 1572.6 հազար դրամ, տույժ՝ 215.1 հազար դրամ/:

5. «Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02511007/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Վարդանանց 18 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 1981.2 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 1974.9 հազար դրամ, տույժ՝ 6.3 հազար դրամ/:

6. «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում» հասարակական կազմակերպությանը /ՀՎՀՀ 02508776/ սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող, Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան 28 հասցեում գտնվող շինության մասով տրամադրել գույքահարկի գծով արտոնություն՝ 6654.0 հազար դրամ գումարի չափով /ապառք՝ 2932.0 հազար դրամ, տույժ՝ 1304.0 հազար դրամ, տուգանք՝ 2418.0/:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

1. «Հայաստանի գրողների միությունն հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Բաղրամյան 3 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 16.01.2015թ. դրությամբ ունի 6758.5 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 4691.3 հազար դրամ, տույժ՝ 2067.2 հազար դրամ/:
2. «Հայաստանի նկարիչների միավորումն հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Աբովյան 16 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 16.01.2015թ. դրությամբ ունի 7398.2 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 5083.2 հազար դրամ, տույժ՝ 2315.0 հազար դրամ/:
3. «Հայաստանի թատերական գործիչների միավորում» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Մաշտոցի 13 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 16.01.2015թ. դրությամբ ունի 4036.4 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 2768.0 հազար դրամ, տույժ՝ 1268.4 հազար դրամ/:
4. «Հայաստանի ժուռնալիստների միություն» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Պուշկինի 3 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 16.01.2015թ. դրությամբ ունի 1787.7 հազար դրամ գումարի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 1572.6 հազար դրամ, տույժ՝ 215.1 հազար դրամ/:

5. «Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորումն հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Վարդանանց 18 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 16.01.2015թ. դրությամբ ունի 1981.2 հազար դրամի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /ապառք՝ 1974.9 հազար դրամ, տույժ՝ 6.3 հազար դրամ/:
6. «Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում» հասարակական կազմակերպությունը Կենտրոն վարչական շրջանի Դեմիրճյան 28 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով պատկանող, գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինության մասով՝ 16.01.2015թ. դրությամբ ունի 6654.0 հազար դրամի չափով գույքահարկի գծով հարկային պարտավորություններ /2932.0 հազար դրամ, տույժ՝ 1304.0 հազար դրամ, տուգանք՝ 2418.0 հազար դրամ/:

Վերոնշյալ հասարակական կազմակերպությունները ունեն ֆինանսական լուրջ խնդիրներ և չեն կարողանում լուծել ոչ միայն ստեղծագործական հարցեր, այլև կատարել գույքահարկի գծով պարտավորությունները:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով նշված միությունների և միավորումների կողմից մշտապես իրականացվող ստեղծագործական ազգանպաստ գործունեությունը՝ ինչպես Երևան քաղաքում, այնպես էլ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում վերոնշյալ միություններին և միավորումներին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկվող օբյեկտ համարվող շինությունների մասով «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագիծը՝ 28616.0 (քսանութ միլիոն վեց հարյուր տասնվեց հազար) հազար դրամ ընդհանուր գումարով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի գրողների միություն, Հայաստանի նկարիչների միություն, Հայաստանի թատերական գործիչների միավորում, Հայաստանի ժուռնալիստների միություն, Հայաստանի կինեմատոգրաֆիստների միավորում, Հայաստանի կոմպոզիտորների և երաժշտագետների միավորում հասարակական կազմակերպություններին սեփականության իրավունքով պատկանող՝ գույքահարկով հարկող օբյեկտ համարվող, շինությունների գույքահարկի գծով հարկային պարտավորությունները 16.01.2015թ. դրությամբ կազմում են 28616.0 (քսանութ միլիոն վեց հարյուր տասնվեց հազար) հազար դրամ, որի համար դիմել են Երևանի քաղաքապետին՝ օրենքով սահմանված կարգով գույքահարկի արտոնություն ստանալու խնդրանքով:

Հաշվի առնելով միությունների և միավորումների գրությունը գույքահարկի գծով հարկային պարտավորությունների մասով՝ արտոնություն ստանալու վերաբերյալ, նպատակահարմար էմ գտնում տրամադրել 28616.0 (քսանութ միլիոն վեց հարյուր տասնվեց հազար) հազար դրամի չափով գույքահարկի գծով արտոնություն:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք Հ. 1

**«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ
ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու
մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման
անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ Հ. 2

**«ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ
ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ
ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

«Գույքահարկի գծով արտոնություններ սահմանելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի 2015 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ